



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌԻ ԿՐԹԱՆՈՒՄԻ
ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնք, ք. Տաշիր, Կ. Մարտիրոսյան, 94
(0254) 2-22-41 tashir.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

09 հոկտեմբերի 2023 թվականի N 1029-Ա

ՎԱՐՁԱՎԱԼՈՒԹՅԱՄԲ ԱՐՈՏԱՎԱՅՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 48 և 76, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 43-րդ հոդվածի, ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2010թ. հոկտեմբեր 28-ի «Արոտավայրերից և խոտհարքներից օգտվելու կարգը սահմանելու մասին» թիվ 1477-Ն որոշումով և հիմք ընդունելով ՀՀ Լոռու մարզի Տաշիր համայնքի ավագանու 2018 թվական հոկտեմբերի 15 «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնքի արոտավայրի և խոտհարքերի օգտագործման համար վճարի չափը սահմանելու մասին» N 87-Ն որոշումը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Գյուղատնտեսական գործունեություն ծավալելու նպատակով Տաշիր համայնքի սեփականություն հանդիսացող 06-016-0102-0001 կադաստրային ծածկագրով 0.7296 հա գյուղատնտեսական նպատակային նշանակության արոտավայրը վարձակալությամբ տրամադարել Էդիկ Միխայիլի Հովհաննիսյանին:

2. Էդիկ Միխայիլի Հովհաննիսյանի հետ կնքնել արոտավայրի վարձակալության պայմանագիր 3 տարի ժամկետով, տարեկան 5107.2 (հինգ հազար հարյուր յոթ ամբողջ երկու) ՀՀ դրամ վարձավճարով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

Է. ԱՐՇԱԿՅԱՆ



2023թ. հոկտեմբերի 09

ք. Տաշիր



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌԻ ՄԱՐԶԻ
ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնք, ք. Տաշիր, Վ. Ասրադյան, 94
(0254) 2-22-41 tashir.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

09 հոկտեմբերի 2023 թվականի N 1030-Ա

**ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ «ՄԵՐՈՒԺԱՆ ՄՈՒՐԱԴՅԱՆ ՎՈՂՈՂԱՅԻ»-ԻՆ ՈԳԵԼԻՑ
ԵՎ ԱԼԿՈՇՈՒԱՅԻՆ ԽՄԻՉՔՆԵՐԻ ԵՎ ԾԽԱՆՈՏԻ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՎԱՃԱՌՔԻ
ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով անհատ ձեռնարկատեր «Մերուժան Մուրադյան Վոլոդյայի»-ի 2023 թվականի հոկտեմբերի 06-ի N96 հայտը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

ՀՀ Լոռու մարզ, Տաշիր համայնք, քաղաք Տաշիր, Երևանյան փողոց, թիվ 177 հասցեում գործող անհատ ձեռնարկատեր «Մերուժան Մուրադյան Վոլոդյայի»-ի հայտը բավարարել և նրան տալ 2023 թվականի չորրորդ եռամսյակի համար ոգելից և ալկոհոլային խմիչքների և ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվություն:

2. Հանձնարարել համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարին եռօրյա ժամկետում սահմանված կարգով հայտատուին տրամադրել համապատասխան թույլտվությունը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Է. ԱՐՇԱԿՅԱՆ

2023թ. հոկտեմբերի 09

ք.Տաշիր





**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՒՈՒ ՄԱՐԶԻ
ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնք, ք. Տաշիր, Վ. Մուրադյան, 94
(0254) 2-22-41 tashir.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

09 հոկտեմբերի 2023 թվականի N 1031-Ա

**ՏԻԳՐԱՆ ԲԵԳԼԱՐԻ ՊՈՂՈՍՅԱՆԻՆ ՓՈԽԱԴՐԱՄԻՋՈՑԻ ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ
ԳՈՒՄԱՐԻ ՊԱՀԱՆՋ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

1. ՀՀ Տաշիր համայնքի ղեկավարի որոշման կարգավորման առարկան.

Քաղաքացի Տիգրան Բեգլարի Պողոսյանը, հանդիսանալով փոխադրամիջոցի գույքահարկ վճարող սուբյեկտ, իրավահարաբերության ծագման պահին գործող «Գույքահարկի մասին» ՀՀ օրենքով և ՀՀ հարկային օրենսգրքով սահմանված կարգով չի կատարել փոխադրամիջոցի գույքահարկ վճարելու պարտականությունը ինչի կապակցությամբ 2023 թվականի սեպտեմբերի 18-ին «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» ենթակետի հիմքով Տաշիրի համայնքապետարանի աշխատակազմում հարուցվել է վարչական վարույթ՝ գույքահարկի գանձման հարցի քննության նպատակով: «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով հարուցված և իրավանազված վարչական վարույթի ընթացքում գործի փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ օբյեկտիվ քննության արդյունքում բացահայտելով գործի բոլոր հանգամանքները, վարչական մարմինը հաստատված է համարում հետևյալը.

2. Վարչական ակտը ընդունելու հիմք հանդիսացող փաստերը.

Համաձայն Տաշիրի համայնքապետարանի ֆինանսատնտեսագիտական նկատմաների հաշվառման և հավաքագրման բաժնի կողմից տրված տեղեկանքի և շարժական գույքի կադաստր վարող մարմնի կողմից տրամադրված փոխադրամիջոցների հաշվառման և գնահատման տվյալների՝ քննարկվող Տաշիր համայնքում հաշվառված «KIA OPTIMA 2.4 GDI» մակնիշի, 01VP969 հաշվառման համարանիշի փոխադրամիջոցը հանդիսանում է քաղաքացի Տիգրան Բեգլարի Պողոսյանի սեփականությունը, որոնք, իրավահարաբերության ծագման պահին գործող «Գույքահարկի մասին» ՀՀ օրենքի և ՀՀ հարկային օրենսգրքի համաձայն, հանդիսանում են հարկվող օբյեկտ:

Նշված փոխադրամիջոցի համար 2020-2022 թվականի համար վճարման ենթակա գույքահարկը կազմում է 183.953 (հարյուր ութսուներեք հազար ինը հարյուր հիսուներեք) ՀՀ դրամ, որից 151.025 (հարյուր հիսունմեկ հազար քսանհինգ) ՀՀ դրամ՝ որպես ապառք, 32.703 (երեսուներկու հազար յոթ հարյուր երեք) ՀՀ դրամ՝ որպես պարտականությունը չկատարելու արդյունքում հաշվարկված տույժ:

2023 թվականի սեպտեմբերի 18-ին «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի առաջին մասի «բ» կետի հիմքով հարուցված վարչական վարույթի շրջանակներում 2023 թվականի հոկտեմբերի 09-ին հրավիրվել են վարչական վարույթի լսումներ, որին մասնակցելու նպատակով պատշաճ ծանուցվել է քաղաքացի Տիգրան Բեգլարի Պողոսյանը (հիմք՝ փոստային անդորրագիր 02.10.2023) :

Քաղաքացի Տիգրան Բեգլարի Պողոսյանը չի ներկայացել վարչական վարույթի լսումներին:

3. Վարչական ակտ ընդունելու հիմնավորումը.

ՀՀ Սահմանադրության 60-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք պարտավոր է օրենքով սահմանված կարգով և չափով մուծել հարկեր, կատարել պարտադիր այլ վճարումներ: Համաձայն իրավահարաբերության ծագման պահին գործող «Գույքահարկի մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի՝ գույքահարկը սեփականության իրավունքով նշված օրենքի երրորդ հոդվածում նշված անձանց պատկանող հարկվող օբյեկտ համարվող գույքի համար սույն օրենքով սահմանված կարգով և չափով համապատասխան բյուջեներ վճարվող ուղղակի հարկ է, որը կախված չէ հարկ վճարողների տնտեսական գործունեության արդյունքներից: Համաձայն ՀՀ հարկային օրենսգրքի 239-րդ հոդվածի՝ փոխադրամիջոցների, գույքահարկը հարկ վճարողներին սեփականության իրավունքով պատկանող հարկման օբյեկտ համարվող փոխադրամիջոցների համար սույն բաժնով սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության համայնքների բյուջեներ վճարվող տեղական հարկ է, որը կախված չէ հարկ վճարողների տնտեսական գործունեության արդյունքներից: Համաձայն իրավահարաբերության ծագման պահին գործող «Գույքահարկի մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով և համամասնությամբ, գույքահարկի գումարը վճարվում է համայնքի վարչական տարածքում հաշվառված փոխադրամիջոցների համար հարկվող օբյեկտի հաշվառման վայրի համայնքի բյուջե: Համաձայն ՀՀ հարկային օրենսգրքի 401-րդ հոդվածի՝ հարկի վճարումը սահմանված ժամկետից ուշացնելու դեպքում ժամկետանց յուրաքանչյուր օրվա համար հարկ վճարողը կամ հարկային գործակալը վճարում է տույժ՝ ժամանակին չմուծված հարկի գումարի 0.04 տոկոսի չափով: Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի՝ համայնքի ղեկավարը, որպես սեփական լիազորություն, օրենքով սահմանված կարգով կազմակերպում է գույքահարկի գանձումը: Հարկային պարտավորությունների գծով գումարների վճարումը սահմանված ժամկետից ուշացնելու դեպքում տեղական ինքնակառավարման մարմինը որոշում է կայացնում հարկ վճարողից ժամանակին չվճարված գումարը գանձելու վերաբերյալ և այդ մասին պատշաճ ծանուցում վերջինիս: Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով

Սահմանադրության, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի «Գույքահարկի մասին» ՀՀ օրենքի 2-րդ և 3-րդ, ՀՀ հարկային օրենսգրքի 398-րդ, «Վարչարարության հիմունքների և վարչակական վարույթի մասին» ՀՀ օրենքի 53-րդ, 58-60-րդ հոդվածներով՝

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ

1. Քաղաքացի Տիգրան Բեգլարի Պողոսյանից հոգուտ Տաշիր համայնքի բուցեր մասնով 183.953 (հարյուր ութսուներեք հազար ինը հարյուր հիսուներեք) ՀՀ դրամ՝ որպես Տաշիր համայնքում հաշվառված «KIA OPTIMA 2.4 GD» մակնիշի 01VP969 փոխադրամիջոցի համար վճարման ենթակա գույքահարկի մասնաբաժնից 151.025 (հարյուր հիսունմեկ հազար քսանհինգ) ՀՀ դրամ՝ որպես ապառք, 32 703 (երեսուներկու հազար յոթ հարյուր երեք) ՀՀ դրամ՝ որպես պարտավանական չկատարելու արդյունքում հաշվարկված տույժ: Հաշվեգրել և բռնագանձել տոնոսներ՝ սկսած 18.09.2023 օրվան հաջորդող օրվանից մինչև պարտավորության փաստացի կատարման օրը ներառյալ:

2. Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Տաշիր համայնքի ղեկավարին կամ դատական կարգով ՀՀ վարչական դատարան՝ երկամսյա ժամկետում:

3. Սույն որոշման պահանջները կամովին չկատարելու դեպքում «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 88-րդ հոդվածով սահմանված կարգով այն ենթակա է հարկադիր կատարման՝ ՀՀ ԱՆ ԴԱՀԿ ծառայության միջոցով անբողոքարկելի դառնալուց հետո եռամսյա ժամկետում:

4. Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն իրականացնում է Տաշիր համայնքի ղեկավարը:

5. Որոշումը ուժի մեջ է մտնում ընդունման մասին օրենքով սահմանված կարգով իրազեկման հաջորդ օրվանից:

6. Գույքահարկը պետք է վճարվի ՀՀ ֆինանսների նախարարության գործառնապան վարչության Տաշիրի համայնքապետարանի 900275084029 հաշվարկային հաշվին:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

Է. ԱՐՇԱԿՅԱՆ



2023թ. հոկտեմբերի 09

ք.Տաշիր



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնք, ք. Տաշիր, Վ. Սարգսյան, 94
(0254) 2-22-41 tashir.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

09 հոկտեմբերի 2023 թվականի N 1032-Ա

**ՀԱՅԿ ՀԱՅԿԱԳԻ ԲԱՐՍԵՂՅԱՆԻՆ ՓՈԽԱԴՐԱՄԻՋՈՑԻ ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԳՈՒՄԱՐԻ
ՊԱՀԱՆՋ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

1. ՀՀ Տաշիր համայնքի ղեկավարի որոշման կարգավորման առարկան.

Քաղաքացի Հայկ Հայկազի Բարսեղյանը, հանդիսանալով փոխադրամիջոցի գույքահարկ վճարող սուբյեկտ, իրավահարաբերության ծագման պահին գործող «Գույքահարկի մասին» ՀՀ օրենքով և ՀՀ հարկային օրենսգրքով սահմանված կարգով չի կատարել փոխադրամիջոցի գույքահարկ վճարելու պարտականությունը, ինչի կապակցությամբ 2023 թվականի սեպտեմբերի 18-ին « Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» ենթակետի հիմքով Տաշիրի համայնքապետարանի աշխատակազմում հարուցվել է վարչական վարույթ՝ գույքահարկի գանձման հարցի քննության նպատակով: «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով հարուցված և իրականացված վարչական վարույթի ընթացքում գործի փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ օբյեկտիվ քննության արդյունքում բացահայտելով գործի բոլոր հանգամանքները, վարչական մարմինը հաստատված է համարում հետևյալը.

2. Վարչական ակտը ընդունելու հիմք հանդիսացող փաստերը.

Համաձայն Տաշիրի համայնքապետարանի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի կողմից տրված տեղեկանքի և շարժական գույքի կադաստր վարող մարմնի կողմից տրամադրված փոխադրամիջոցների հաշվառման և գնահատման տվյալների՝ քննարկվող Տաշիր համայնքում հաշվառված «TOYOTA LAND CRUISER PRADO 2.7I » մակնիշի, 310S808 հաշվառման համարանիշի փոխադրամիջոցը հանդիսանում է քաղաքացի Հայկ Հայկազի Բարսեղյանի սեփականությունը, որոնք, իրավահարաբերության ծագման պահին գործող « Գույքահարկի մասին» ՀՀ օրենքի և ՀՀ հարկային օրենսգրքի համաձայն, հանդիսանում են հարկվող օբյեկտ:

«Գույքահարկի մասին» փոխադրամիջոցի համար 2019-2022 թվականի համար վճարման ենթակա գույքահարկը կազմում է 203 . 878 (երկու հարյուր երեք հազար ութ հարյուր յոթանասունուրթ) ՀՀ դրամ, որից 162.800 (հարյուր վաթսուներկու հազար ութ հարյուր) ՀՀ դրամ՝ որպես ապառք, 41.078 (քառասունմեկ հազար յոթանասունուրթ) ՀՀ դրամ՝ որպես պարտականությունը չկատարելու արդյունքում հաշվարկված տույժ:

2023 թվականի սեպտեմբերի 18-ին «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի առաջին մասի «բ» կետի հիմքով հարուցված վարչական վարույթի շրջանակներում 2023 թվականի հոկտեմբերի 09-ին հրավիրվել են վարչական վարույթի լսումներ, որին մասնակցելու նպատակով պատշաճ ծանուցվել է քաղաքացի Հայկ Հայկազի Բարսեղյանը (հիմք՝ փոստային անդորրագիր 06.10.2023) :

Քաղաքացի Հայկ Հայկազի Բարսեղյանը չի ներկայացել վարչական վարույթի լսումներին:

3. Վարչական ակտ ընդունելու հիմնավորումը.

ՀՀ Սահմանադրության 60-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք պարտավոր է օրենքով սահմանված կարգով և չափով մուծել հարկեր, կատարել պարտադիր այլ վճարումներ: Համաձայն իրավահարաբերության ծագման պահին գործող «Գույքահարկի մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի՝ գույքահարկը սեփականության իրավունքով նշված օրենքի երրորդ հոդվածում նշված անձանց պատկանող հարկվող օբյեկտ համարվող գույքի համար սույն օրենքով սահմանված կարգով և չափով համապատասխան բյուջեներ վճարվող ուղղակի հարկ է, որը կախված չէ հարկ վճարողների տնտեսական գործունեության արդյունքներից: Համաձայն ՀՀ հարկային օրենսգրքի 239-րդ հոդվածի՝ փոխադրամիջոցների գույքահարկը հարկ վճարողներին սեփականության իրավունքով պատկանող հարկման օբյեկտ համարվող փոխադրամիջոցների համար սույն բաժնով սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության համայնքների բյուջեներ վճարվող տեղական հարկ է, որը կախված չէ հարկ վճարողների տնտեսական գործունեության արդյունքներից: Համաձայն իրավահարաբերության ծագման պահին գործող «Գույքահարկի մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով և համամասնությամբ, գույքահարկի գումարը վճարվում է համայնքի վարչական տարածքում հաշվառված փոխադրամիջոցների համար հարկվող օբյեկտի հաշվառման վայրի համայնքի բյուջե: Համաձայն ՀՀ հարկային օրենսգրքի 401-րդ հոդվածի՝ հարկի վճարումը սահմանված ժամկետից ուշացնելու դեպքում ժամկետանց յուրաքանչյուր օրվա համար հարկ վճարողը կամ հարկային գործակալը վճարում է տույժ՝ ժամանակին չմուծված հարկի գումարի 0.04 տոկոսի չափով: Համաձայն՝ «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի՝ համայնքի ղեկավարը, որպես սեփական լիազորություն, օրենքով սահմանված կարգով կազմակերպում է գույքահարկի գանձումը: Հարկային պարտավորությունների գծով գումարների վճարումը սահմանված ժամկետից ուշացնելու դեպքում տեղական ինքնակառավարման մարմինը որոշում է կայացնում հարկ վճարողից ժամանակին չվճարված գումարը գանձելու վերաբերյալ և այդ մասին պատշաճ ծանուցում վերջինիս: Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով

«Սահմանադրության, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի, «Գույքահարկի մասին» ՀՀ օրենքի 2-րդ և 3-րդ, ՀՀ հարկային օրենսգրքի 398-րդ, «Վարչարարության հիմունքների և վարչակական վարույթի մասին» ՀՀ օրենքի 53-րդ, 58-60-րդ հոդվածներով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Քաղաքացի Հայկ Հայկազի Բարսեղյանից հոգուտ Տաշիր համայնքի բուջյղ ժամել 203.878 (երկու հարյուր երեք հազար ութ հարյուր յոթանասունութ) ՀՀ դրամ՝ որպես Տաշիր համայնքում հաշվառված «TOYOTA LAND CRUISER PRADO 2.7I» մակնիշի, 310S808 փոխադրամիջոցի համար վճարման ենթակա գույքահարկի ժամել 162.800 (հարյուր վաթսուներկու հազար ութ հարյուր) ՀՀ դրամ՝ որպես անառք, 41.078 (քառասունմեկ հազար յոթանասունութ) ՀՀ դրամ՝ որպես անարտականությունը չկատարելու արդյունքում հաշվարկված տույժ: Հաշվեգրել և բռնագանձել տրված տրված սկսած 18.09.2023 օրվան հաջորդող օրվանից մինչև պարտավորության փաստացի կատարման օրը ներառյալ:
2. Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Տաշիր համայնքի ղեկավարին կամ դատական կարգով ՀՀ վարչական դատարան երկամսյա ժամկետում:
3. Սույն որոշման պահանջները կամովին չկատարելու դեպքում «Վարչարարության հիմունքների և վարչակական վարույթի մասին» ՀՀ օրենքի 88-րդ հոդվածով սահմանված կարգով այն ենթակա է հարկադիր կատարման՝ ՀՀ ԱՆ ԴԱԿԿ ծառայության միջոցով անբողոքարկելի դառնալուց հետո եռամսյա ժամկետում:
4. Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն իրականացնում է Տաշիր համայնքի ղեկավարը:
5. Որոշումը ուժի մեջ է մտնում ընդունման մասին օրենքով սահմանված կարգով իրազեկման հաջորդ օրվանից:
6. Գույքահարկը պետք է վճարվի ՀՀ ֆինանսների նախարարության գործառնական վարչության Տաշիրի համայնքապետարանի 900275084029 հաշվարկային հաշվին:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

Է. ԱՐՇԱԿՅԱՆ



2023թ. հոկտեմբերի 09

ք.Տաշիր



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՒՈՒ ՄԱՐԶԻ
ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնք, ք. Տաշիր, Վ. Արթուրյան, 94
(0254) 2-22-41 tashir.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

09 հոկտեմբերի 2023 թվականի N 1033-Ա

**ԱՐՍԵՆ ԱՎԵՏՅԱՆԻՆ ՓՈԽԱԴՐԱՄԻՋՈՑԻ ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԳՈՒՄԱՐԻ ՂԱՀԱՆՋ
ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

1. ՀՀ Տաշիր համայնքի ղեկավարի որոշման կարգավորման առարկան.

Քաղաքացի Արսեն Ավետյանը, հանդիսանալով փոխադրամիջոցի գույքահարկ վճարող սուբյեկտ, իրավահարաբերության ծագման պահին գործող «Գույքահարկի մասին» ՀՀ օրենքով և ՀՀ հարկային օրենսգրքով սահմանված կարգով չի կատարել փոխադրամիջոցի գույքահարկ վճարելու պարտականությունը, ինչի կապակցությամբ 2023 թվականի սեպտեմբերի 18-ին «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» ենթակետի հիմքով Տաշիրի համայնքապետարանի աշխատակազմում հարուցվել է վարչական վարույթ՝ գույքահարկի գանձման հարցի քննության նպատակով: «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով հարուցված և իրականացված վարչական վարույթի ընթացքում գործի փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ օբյեկտիվ քննության արդյունքում բացահայտելով գործի բոլոր հանգամանքները, վարչական մարմինը հաստատված է համարում հետևյալը.

2. Վարչական ակտը ընդունելու հիմք հանդիսացող փաստերը.

Համաձայն Տաշիրի համայնքապետարանի ֆինանսատնտեսագիտական եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի կողմից տրված տեղեկանքի և շարժական գույքի կադաստր վարող մարմնի կողմից տրամադրված փոխադրամիջոցների հաշվառման և գնահատման տվյալների՝ քննարկվող Տաշիր համայնքում հաշվառված «MERCEDES-BENZ E 320» մակնիշի, 910X 991 հաշվառման համարանիշի փոխադրամիջոցը հանդիսանում է քաղաքացի Արսեն Ավետյանի սեփականությունը, որոնք, իրավահարաբերության ծագման պահին գործող «Գույքահարկի մասին» ՀՀ օրենքի և ՀՀ հարկային օրենսգրքի համաձայն, հանդիսանում են հարկվող օբյեկտ:

Նշված փոխադրամիջոցի համար 2020-2022 թվականի համար վճարման ենթակա գույքահարկը կազմում է 258.932 (երկու հարյուր հիսունութ հազար ինը հարյուր երեսուներկու) ՀՀ դրամ, որից 211.800 (երկու հարյուր տասնմեկ հազար ութ հարյուր) ՀՀ դրամ՝ որպես ապառք, 47.132 (քառասունյոթ հազար հարյուր երեսուներկու) ՀՀ դրամ՝ որպես պարտականությունը չկատարելու արդյունքում հաշվարկված տույժ դրամ՝ որպես պարտականությունը չկատարելու արդյունքում հաշվարկված տույժ:

2023 թվականի սեպտեմբերի 18-ին «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի առաջին մասի «բ» կետի հիմքով հարուցված վարչական վարույթի շրջանակներում 2023 թվականի հոկտեմբերի 09-ին հրավիրվել են վարչական վարույթի լուսմներ, որին մասնակցելու նպատակով պատշաճ ծանուցվել է քաղաքացի Արսեն Ավետյանը (հիմք՝ փոստային անդորրագիր 02.10.2023) :

Քաղաքացի Արսեն Ավետյանը չի ներկայացել վարչական վարույթի լուսմներին:

3. Վարչական ակտ ընդունելու հիմնավորումը.

ՀՀ Սահմանադրության 60-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք պարտավոր է օրենքով սահմանված կարգով և չափով մուծել հարկեր, կատարել պարտադիր այլ վճարումներ: Համաձայն իրավահարաբերության ծագման պահին գործող «Գույքահարկի մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի՝ գույքահարկը սեփականության իրավունքով նշված օրենքի երրորդ հոդվածում նշված անձանց պատկանող հարկվող օբյեկտ համարվող գույքի համար սույն օրենքով սահմանված կարգով և չափով համապատասխան բյուջեներ վճարվող ուղղակի հարկ է, որը կախված չէ հարկ վճարողների տնտեսական գործունեության արդյունքներից: Համաձայն ՀՀ հարկային օրենսգրքի 239-րդ հոդվածի՝ փոխադրամիջոցների գույքահարկը հարկ վճարողներին սեփականության իրավունքով պատկանող հարկման օբյեկտ համարվող փոխադրամիջոցների համար սույն քաժնով սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության համայնքների բյուջեներ վճարվող տեղական հարկ է, որը կախված չէ հարկ վճարողների տնտեսական գործունեության արդյունքներից: Համաձայն իրավահարաբերության ծագման պահին գործող «Գույքահարկի մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով և համամասնությամբ, գույքահարկի գումարը վճարվում է համայնքի վարչական տարածքում հաշվառված փոխադրամիջոցների համար հարկվող օբյեկտի հաշվառման վայրի համայնքի բյուջե: Համաձայն ՀՀ հարկային օրենսգրքի 401-րդ հոդվածի՝ հարկի վճարումը սահմանված ժամկետից ուշացնելու դեպքում ժամկետանց յուրաքանչյուր օրվա համար հարկ վճարողը կամ հարկային գործակալը վճարում է տույժ՝ ժամանակին չմուծված հարկի գումարի 0.04 տոկոսի չափով: Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի՝ համայնքի ղեկավարը, որպես սեփական լիազորություն, օրենքով սահմանված կարգով կազմակերպում է գույքահարկի գանձումը: Հարկային պարտավորությունների գծով գումարների վճարումը սահմանված ժամկետից ուշացնելու դեպքում տեղական ինքնակառավարման մարմինը որոշում է կայացնում հարկ վճարողից ժամանակին չվճարված գումարը գանձելու վերաբերյալ և այդ մասին պատշաճ ծանուցում վերջինիս: Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով

«Սահմանադրության, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի
«Գույքահարկի մասին» ՀՀ օրենքի 2-րդ և 3-րդ, ՀՀ հարկային օրենսգրքի
398-րդ, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի
53-րդ, 58-60-րդ հոդվածներով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Քաղաքացի Արսեն Ավետյանից հոգուտ Տաշիր համայնքի բյուջեի գանձե 238 932
(երկու հարյուր հիսունութ հազար ինը հարյուր երեսուներկու) ՀՀ դրամ՝ որպես Տաշիր
համայնքում հաշվառված «MERCEDES-BENZ E 320 » մակնշի 9ՕX
991 փոխադրամիջոցի համար վճարման ենթակա արժույթի
գումար, որից 211.800 (երկու հարյուր տասնմեկ հազար ութ հարյուր) ՀՀ դրամ՝ որպես
ապառք, 47.132 (քառասունյոթ հազար հարյուր երեսուներկու) ՀՀ դրամ՝ որպես
պարտականությունը չկատարելու արդյունքում հաշվարկված տույժ: Հաշվետել և
բռնագանձել տոկոսներ՝ սկսած 18.09.2023 օրվան հաջորդող օրվանց մինչև
պարտավորության փաստացի կատարման օրը ներառյալ:

2. Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Տաշիր համայնքի
ղեկավարին կամ դատական կարգով ՀՀ վարչական դատարան՝ երկամսյա
ժամկետում:

3. Սույն որոշման պահանջները կամովին չկատարելու դեպքում՝ «Վարչարարության
հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 88-րդ հոդվածով սահմանված
կարգով այն ենթակա է հարկադիր կատարման՝ ՀՀ ԱՆ ԴԱԿԿ ծառայության միջոցով
անբողոքարկելի դառնալուց հետո եռամսյա ժամկետում:

4. Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն իրականացնում է
Տաշիր համայնքի ղեկավարը:

5. Որոշումը ուժի մեջ է մտնում ընդունման մասին օրենքով սահմանված կարգով
իրազեկման հաջորդ օրվանից:

6. Գույքահարկը պետք է վճարվի ՀՀ ֆինանսների նախարարության գործառնական
վարչության Տաշիրի համայնքապետարանի 900275084029 հաշվարկային հաշվին:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

Է. ԱՐՇԱԿՅԱՆ



2023թ. հոկտեմբերի 09

ք.Տաշիր



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնք, ք. Տաշիր, Վ. Մարտիրոսյան, 94
(0254) 2-22-41 tashir.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

09 հոկտեմբերի 2023 թվականի N 1034-Ա

**ՄԱՐՈ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆԻՆ, ՍԱՆԱՍԱՐ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆԻՆ, ԱՐԵՎ
ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆԻՆ, ԱՐՄԵՆ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆԻՆ ԵՎ ԿԱՐԵՆ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆԻՆ
ՀՈՂԻ ՀԱՐԿԻ ԵՎ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՀԱՐԿԻ ԳՈՒՄԱՐԻ ՊԱՀԱՆՋ
ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

1. ՀՀ Տաշիր համայնքի ղեկավարի որոշման կարգավորման առարկան.

Քաղաքացիներ Մարո Մարտիրոսյանը, Սանասար Մարտիրոսյանը, Արեվ Մարտիրոսյանը, Արմեն Մարտիրոսյանը և Կարեն Մարտիրոսյանը հանդիսանալով հողի հարկ և անշարժ գույքի հարկ վճարող սուբյեկտ, իրավահարաբերության ծագման պահին գործող « Հողի հարկի մասին» ՀՀ օրենքով և ՀՀ հարկային օրենսգրքով սահմանված կարգով չեն կատարել հողի հարկ և անշարժ գույքի հարկ վճարելու պարտականությունը, ինչի կապակցությամբ 2023 թվականի սեպտեմբերի 18-ին « Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» ենթակետի հիմքով Տաշիրի համայնքապետարանի աշխատակազմում հարուցվել է վարչական վարույթ՝ հողի հարկի և անշարժ գույքի հարկի գանձման հարցի քննության նպատակով: «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով հարուցված և իրականացված վարչական վարույթի ընթացքում գործի փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ օբյեկտիվ քննության արդյունքում բացահայտելով գործի բոլոր հանգամանքները, վարչական մարմինը հաստատված է համարում հետևյալը.

2. Վարչական ակտն ընդունելու համար հիմք հանդիսացող փաստերը:

Համաձայն Տաշիրի համայնքապետարանի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի և ՀՀ Կադաստրի կոմիտեի կողմից տրամադրված տվյալների՝ 06-64-0104-0006, 06-064-0102-0012, 06-064-0102-0044 և 06-064-0006-0003 ծածկագրերով, 9.953 հա ընդհանուր մակերեսով հողամասերը հանդիսանում են Մարո Մարտիրոսյանի, Սանասար Մարտիրոսյանի, Արեվ Մարտիրոսյանի, Արմեն Մարտիրոսյանի և Կարեն Մարտիրոսյանի սեփականությունը.

որ իրավահարաբերության ծագման պահին գործող «Հողի Հարկի մասին»
«**օրենքով** և ՀՀ հարկային օրենսգրքով համարվում է հարկվող օբյեկտ :

Եւշված հողատմասերի հողի հարկը 2008-2020 թվականների համար կազմում է 1.452.268 (մեկ միլիոն չորս հարյուր հիսուներկու հազար երկու հարյուր վաթսունութ) ՀՀ դրամ,որից 974.311 (ինը հարյուր յոթանասունչորս հազար երեք հարյուր տասնմեկ) ՀՀ դրամ՝ որպես ապառք,477.957 (չորս հարյուր յոթանասունյոթ հազար ինը հարյուր հիսունյոթ) ՀՀ դրամ՝ որպես տույժ :

Անշարժ գույքի հարկը 2021-2022 թվականների համար կազմում է 173.115 (հարյուր յոթանասուներեք հազար հարյուր տասնհինգ) ՀՀ դրամ, որից 146.537(հարյուր քառասունվեց հազար հինգ հարյուր երեսունյոթ) ՀՀ դրամ՝ որպես ապառք, 26.578 (քսանվեց հազար հինգ հարյուր յոթանասունութ) ՀՀ դրամ՝ որպես տույժ:

2023 թվականի սեպտեմբերի 18-ին «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի առաջին մասի «բ» կետի հիմքով Տաշիրի համայնքապետարանում հարուցված վարչական վարույթի շրջանակներում 2023 թվականի հոկտեմբերի 09-ին հրավիրվել են վարչական վարույթի լուծման, որին մասնակցելու նպատակով պատշաճ ծանուցվել և չեն ներկայացել քաղաքացիներ Մարո Մարտիրոսյանը,Սանասար Մարտիրոսյանը,Արեվ Մարտիրոսյանը, Արմեն Մարտիրոսյանը և Կարեն Մարտիրոսյանը (հիմք՝ փոստային անդորրագիր 02.10.2023) :

(Վարչական վարույթի լուծման իրականացվել են պատշաճ ծանուցված քաղաքացիներ Մարո Մարտիրոսյանի,Սանասար Մարտիրոսյանի,Արեվ Մարտիրոսյանի, Արմեն Մարտիրոսյանի և Կարեն Մարտիրոսյանի բացակայությամբ):

3. Վարչական ակտ ընդունելու հիմնավորումը:

ՀՀ Սահմանադրության 60-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք պարտավոր է օրենքով գահմանված կարգով և չափով՝ մուծել հարկեր, կատարել պարտադիր այլ վճարումներ: Համաձայն իրավահարաբերության ծագման պահին գործող «Հողի հարկի մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի՝ հողի հարկ վճարողներ են հանդիսանում հողի սեփականատերերը,պետական սեփականություն հանդիսացող հողի մշտական օգտագործողները: Համաձայն իրավահարաբերության ծագման պահին գործող «Հողի հարկի մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի՝ հողի հարկի գումարը համայնքի վարչական սահմաններում գտնվող հողամասերի համար վճարվում է հարկվող օբյեկտի գտնվելու վայրի համայնքի բյուջե: Համաձայն ՀՀ հարկային օրենսգրքի 225-րդ հոդվածի՝ անշարժ գույքի հարկ վճարողներ են համարվում կազմակերպություններն ու ֆիզիկական անձինք: Համաձայն ՀՀ հարկային օրենսգրքի 227-րդ հոդվածի՝ անշարժ գույքի հարկով հարկման օբյեկտ է համարվում անշարժ գույքը՝ հողամասերը և (կամ) դրանց բարելավումները: Համաձայն ՀՀ հարկային օրենսգրքի 401-րդ հոդվածի՝ հարկային վճարումը սահմանված ժամկետներից ուշացնելու դեպքում ժամկետանց յուրաքանչյուր օրվա համար հարկ վճարողը կամ հարկային գործակալը վճարում է տույժ՝ 0.04 տոկոսի չափով: Հարկային պարտավորությունների գծով գումարների վճարումը սահմանված ժամկետից ուշացնելու դեպքում՝ տեղական ինքնակառավարման մարմինը որոշում է կայացնում հարկ վճարողից ժամանակին

վճարված գումարը գանձելու վերաբերյալ և այդ մասին պատշաճ ծանուցումներ են արվում: Վերջինս զննելով վերոգրյալից և ղեկավարվելով իրավահարաբերության պահին գործառնական խարկի մասին» ՀՀ օրենքի 1-ին,16-րդ, ՀՀ հարկային օրենսգրքի 92-րդ, «Վարչարարության հիմունքների և վարչակական վարույթի մասին» ՀՀ օրենքի 58-րդ, 58-60-րդ հոդվածներով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1.Քաղաքացի Մարո Մարտիրոսյանից, Սանասար Մարտիրոսյանից, Բաղեմ Մարտիրոսյանից, Արմեն Մարտիրոսյանից և Կարեն Մարտիրոսյանից հօտուտ Տաշիր համայնքի բյուջեի գանձել 1.625.383 (մեկ միլիոն վեց հարյուր քսանհինգ հազար օրսոք հարյուր ութսուներեք) ՀՀ դրամ.

1.452.268 (մեկ միլիոն չորս հարյուր հիսուներկու հազար երկու հարյուր վաթսուներթ) ՀՀ դրամ՝ որպես 06-64-0104-0006, 06-064-0102-0012, 06-064-0102-0044 և 06-064-0006-0003 ծածկագրերով, 9.953 հա ընդհանուր մակերեսով հողամասերի հողի հարկ,որից 974.311 (ինը հարյուր յոթանասունչորս հազար երեք հարյուր տասնմեկ) ՀՀ դրամ՝ որպես ապառք,477.957 (չորս հարյուր յոթանասունյոթ հազար ինը հարյուր հիսունյոթ) ՀՀ դրամ՝ որպես տույժ ,

173.115 (հարյուր յոթանասուներեք հազար հարյուր տասնհինգ) ՀՀ դրամ՝ որ պես անշարժ գույքի հարկ,որից 146.537(հարյուր քառասունվեց հազար հինգ հարյուր երեսունյոթ) ՀՀ դրամ՝ որպես ապառք, 26.578 (քսանվեց հազար հինգ հարյուր յոթանասունութ) ՀՀ դրամ՝ որպես տույժ: Հաշվեգրել և բռնագանձել մայր գումար և տոկոսներ՝ սկսած 28.08.2023 օրվան հաջորդող օրվանից մինչև պարտավորության փաստացի կատարման օրը ներառյալ:

2. Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Տաշիրի համայնքի ղեկավարին՝ այն ստանալուց և դրա ուժի մեջ մտնելու օրվանից 2 ամսվա ընթացքում կամ դատական կարգով Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝երկամսյա ժամկետում:

3. Սույն որոշման պահանջները կամովին չկատարելու դեպքում «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 88-րդ հոդվածով սահմանված կարգով այն ենթակա է կատարման ՀՀ ԱՆ ԴԱՀԿ ծառայության միջոցով անբողոքարկելի դառնալուց հետո եռամսյա ժամկետում.

4. Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն իրականացնում է Տաշիր համայնքի ղեկավարը:

5. Որոշումը ուժի մեջ է մտնում ընդունման հաջորդ օրվանից:

6. Հողի հարկը պետք է վճարել ՀՀ ֆինանսների նախարարության գործառնական վարչության Տաշիրի համայնքապետարանի 900275045826 հաշվեհամարին, անշարժ գույքի հարկը՝ 900275002104 հաշվեհամարին:

ՎԱՄԱՅՆ ԲԻ ԴԵՎԱԿԱՐ՝

Է. ԱՐՇԱԿՅԱՆ





**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌԻ ԄԱՐՁԻ
ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնք, ք. Տաշիր, Վ. Մաթևոսյան, 94
(0254) 2-22-41 tashir.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

09 հոկտեմբերի 2023 թվականի N 1035-Ա

**ՏԱՇԻՐԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻՆ ՔԱՆԴՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ
ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N596-Ն որոշումով, և հիմք ընդունելով «Վանաձորի նախագծող» ՍՊԸ -ի կողմից տրված տեխնիկական վիճակի և սեյսմիկ խոցելիության վերաբերյալ հետազոտության եզրակացությունը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Տաշիրի համայնքապետարանին տալ Գետավան բնակավայրի ակումբի շենքի քանդման թույլտվություն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

Է. ԱՐՇԱԿՅԱՆ



2023թ. հոկտեմբերի 09

ք. Տաշիր



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնք, ք. Տաշիր, Վ. Աղբալյան, 94
(0254) 2-22-41 tashir.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

10 հոկտեմբերի 2023 թվականի N 1036-Ա

**ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԳՅՈՒՂ ՄԵԾԱՎԱՆ 06-074-0097-0011
ԾԱԾԿԱԳՐՈՎ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՀՈՂԱՄԱՍԻ ԳՈՐԾԱՌ-ՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ
ԵՎ ՍՈՒԲՅԵԿՏԻ ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ՔԱՐՏԵՐՈՒՄ ՈՒՂՂՄԱՆ ՄԱՍԻՆ**

